

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում համայնքում կազմակերպվում են Պետական, Ազգային և այլ տոների, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստվում է ազգային ծեսերի ու ավանդույթների վերականգնմանը և տարածմանը (ՀՀ Անկախության, Առաջին Հանրապետության, Հաղթանակի, Ազգային բանակի օրերի, Սահմանադրության, ինչպես նաև Եղեռնի ու Երկրաշարժի զոհերի հիշատակության օր, ավանդական ծիսական տոներ և այլն):

Համայնքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն աջակցում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության գործին:

Համայնքի վարչական տարածքում շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում քաղաքապետարանի կողմից ապահովվում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

Տաշիրի քաղաքապետարանի ենթակայության
մշակութային կառույցների վերաբերյալ

Տաշիրի քաղաքապետարանի ենթակայության տակ գործում են՝

1 մշակույթի տուն, 1 գրադարան, 1 արտադպրոցական Կենտրոն և 1 արվեստի դպրոց /ՀՈԱԿ/:

Արվեստի դպրոցը գործում է 1959 թ-ից՝ Էրեբունի հասցեում, երկհարկանի քարաշեն շենքում: Դպրոցն ունի վերանորոգման կարիք, երաժշտական գործիքների մեծ մասը օգտագործման ենթակա չէ, կոշտ գույքը բարոյապես և ֆիզիկապես մաշված է: Շենքը ջեռուցվում է մասնակի՝ էլեկտրական սալիկներով, ունի մեկ դահլիճ /49 տեղ/: Այստեղ են անցկացվում դպրոցի աշակերտների հաշվետու համերգները և այլ զանազան միջոցառումներ: Դպրոցի աշակերտները բազմաթիվ անգամ մասնկացել են «Վերածնունդ» միջազգային փառատոնին և արժանացել դիպլոմների:

Աշխատողների թիվը 13 է, որոնցից 12՝ դասատու: Աշակերների թիվը կազմում է 120, որոնցից 29-ը 100 % ազատված են վարձավճարից:

Մշակույթի տունը գործում է 1981թ-ից, Վազգեն Սարգսյան 94 հասցեում: Աշխատողների թիվը 5 է: Մշակույթի տունը ջեռուցվում է մասնակի՝ էլեկտրական սալիկներով: Գործում են շախմատի և պարի խմբակները, որտեղ զբաղված են շուրջ 30 սաներ: «Շուշաններ» պարի խումբը 2016թ. մասնակցել է «Վերածնունդ» միջազգային փառատոնին և արժանացել դիպլոմի:

Գրադարանը գործում է 1950 թ-ից: 1986թ. Գագարինի 8 և Վազգեն Սարգսյան 94 հասցեներում: Աշխատողների թիվը 9 մարդ է: Զեռուցվում է էլեկտրական սալիկներով, մանկական մասնաճյուղը գրականության խիստ կարիք ունի, այստեղ անհրաժեշտ է նաև գույք: Գագարինի 8 հասցեում գտնվող մասնաճյուղի վիճակը բավարար է:

Ընդհանուր գրքային ֆոնդը կազմում է 74189 կտոր գիրք: Ընթացիկ տարվա հունվարից մայիս ընկած ժամանակահատվածում գրադարանն ունեցել է 445 ընթերցող: Գրադարանում գործում են գրքային հոբբեյանական ցուցադրություններ, կազմակերպվում գրական-երաժշտական հանդիսություններ:

Արտադարոցական կենտրոնն ընթացիկ տարվա հունվար ամսից Էրեբունի հասցեում գտնվող շենքից ժամանակավոր տեղափոխվել է մշակույթի տուն: Կենտրոնի շենքը ամբողջովին խարխլված է, գտնվում է խիստ վթարային վիճակում: Նոր հասցեում՝ մշակույթի տանը, ջեռուցվում է էլեկտրական սալիկներով, ունի գույքի խիստ կարիք: Գործում են ասեղնագործության, սեղանի ձևավորման և դիզայնի խմբակները: Աշխատողների թիվը՝ 8 մարդ:

«Տաշիր» պարի խմբի սաները մշտապես մասնակցում են հանրապետությունում կազմակերպված փառատոններին և վերադառնում մրցանակներով: Ասեղնագործության, դիզայնի և սեղանի ձևավորման խմբերի սաները Տաշիր համայնքում կազմակերպում են ցուցահանդեսներ:

Քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպվել է Գյումրու գեղարվեստի Ակադեմիայի ուսանողների գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը: Աջակցել են «Լույս» կրթաթոշակային հիմնադրամի «Զարգացնենք Հայաստանը միասին» ծրագրին Տաշիրում: Մշակութային ծրագրերի իրականացման, բնակչության հետ կապերի ամրապնդման և պահպանման նպատակով քաղաքապետարանը համագործակցում և աջակցում է ՀԿ-ների հետ:

Առանձնահատուկ են նշվել ցեղասպանության 100-րդ տարելիցը և Մեծ Հաղթանակի 70-ամյակը: Ցեղասպանության մեկդարյա տարելիցին նվիրված կանգնեցվել է անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան: Քաղաքային այգում տեղադրվել է «Փոքրիկ իշխան»-ի արձանը:

Սերտ կապ է պահպանվում առաքելական և կաթոլիկ եկեղեցիների հետ, քաղաքի անհատ ստեղծագործողների և կատարողների հետ՝ ապահովելով նրանց մասնակցությունը համայնքային և միջհամայնքային մասսայական միջոցառումներին:

Ապագայում նախատեսվում Տաշիրում հիմնել երկրագիտական թանգարան:

03.05.2016թ.

Մհեր Մելիքյան